Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1901

1999

926

Հ. Խորէն վարդապետ Ստեփանէն

Բագուի մէջ։

Եթէ իսկապէս, ինչպէս առհասարակ ասում են, մեր ազգի փրկութիւնը պէտք է ճշմարիտ լուսաւորութեան և կանոնաւոր դաստիարակութեան մէջ տեսնենք, ապա ուրեմն պարտաւորենք միշտ արթուն հսկողութիւն ունենալ և քննել, թէ ազգի կրթութեան ղեկը ո՞ւմ ձեռքի է և ի՞նչպէս են նորան վարում և առաջնորդում զանազան տեղերում։ Խօսքս մասնաւորեմ։ Բագուի հայերը ձգտում և եռանդ ունենալով օր ըստ օրէ յառաջ գնալու՝ մի և նոյն ժամանակ բաւական նեղամտութիւն ես ունին, նոքա այնքան բծախնդիր չէին ըկալի իրանց հասարակական գործակատարները. այս պատճառով էլ երբ լսում էին Հ. Ստեփանէի և մի քանի հասարակութիւնների մէջ տեղի ունեցած անախորժ տարաձայնութիւններ՝ յանցանքը միշտ ժողովուրդի անուսումնասիրութեանն էին վերագրում։ Վերջապէս Հ. Ստեփանէին հանդիպելով ճշմարիտ գիտնական դաստիարակ և հաղուագիւտ եկեղեցական՝ ցանկացան օգուտ քաղել հանգամանքներից, և նա Մարդասիրական ընկերութեան միջնորդութեամբ և վեհափառ Թոյլտուութեամբ անցեալ տարու վերջերում Բագու հրաւիրվեցաւ. Ժողովուրդը մեծ պատուով և ակնկալութիւններով ընդունեց նորան և յափշտակուած այնպիսի Թանկագին գիւտով բոլորովին յանձնուեցաւ նորան անսահման հաւատով։ Եւ այսպէս՝ Հ. Ստեփանէն այստեղի ազգային կրթութեան ղեկը իւր ձեռքը առնելով՝ մի այնպիսի ընդարձակ ասպարէզի մէջ մտաւ, ուր անկեղծ և խելացի գործիչը կարող էր, առանց նշանաւոր խոչընդոտների հանդիպելու, հիմնաւոր արդիւնք ա-

4 1901-60
3ք. 1908
1877թ.

առաջացնել: Այժմ ուրեմն իրաւունք ունինք մի հարևանցի ակնարկ ձգելու Հ. Ստեփանէի ու Թամանայ գործունէութեան վերայ։

1. Ամենից առաջ նա նկարագրեց իր արարմունքները, կրած հալածանքները և արած յաղթութիւնները իր թշնամիների դէմ, ճարտարախօս ոճով գովեց և գովաբանեց իր դիտանական — դաստիարակական արժանաւորութիւնները. Իսկ յետոյ յայտարարեց, որ ինքը տաքարիւն է և անհամբեր, չէ կարողանում զսպել բարկութեան կիրքը և բարկացած ժամանակը ինքը իրան կորցնում է խպառ և ընդունակ դառնում ամենայն բանի. ուստի և ոչ ոք չը պէտի վշտանայ՝ որ և լսէ անախորժ վարմունքի հանդիպելով իր կողմից: Այս ստորոտի յայտարարութիւնը, որ նորա գործունէութեան կարապետն էր, իր մէջ խորին խորհուրդ էր պարունակում, որը յետոյ պարզուեցաւ։

2) Նա իր գործունէութիւնը սկսեց խռովութ և հերքողական ոճով. ուրացաւ այն ամենը՝ որ ինչ իրանից առաջ գործուածէր. դպրոցների վիճակը և աշակերտների մտաւոր ու բարոյական դրութիւնը, թէ՛ առանձին և թէ՛ հրապարակով բոլորովին խաւար գոյներով նկարագրեց ժողովրդին: Դպրոցի մէջ կանգնած, աշակերտների, աշակերտուհիների, հոգաբարձութեան և բազմաթիւ այցելուների ներկայութեամբ, բոլոր ուսուցիչներին անհիմն և անբարեխիղճ գործակատարներ ցոյց տուեց ու վայր ձգեց նոցա պատիւը, և այս այն ուսուցիչներին, որոնց գործակատարութիւնը ինքը, նոր եկած լինելով, երբէք տեսած չէր. ես ականատես վկայ եմ, որ ինչպէս այս դէպքից յետոյ ժողովուրդը յարձակվում էր խեղճերին վերայ և վատաբանում ամեն տեղ։

3) Շէնքերի մէջ այնպիսի փոփոխութիւններ և նորոգութիւններ արաւ, որոնք այնքան կարեւոր չէին և որոնք յատկապէս դպրոցների օգտին չէին ծառայում, այն ինչ աշակերտների դրանիցանները և նստարանները թէ՛ իրանց անպիտան չէն-

ա-108

քով և թէ՛ անգի դարսողութեամբ բոլորովին անյարմար դոլով ներկայի պահանջին՝ ուշադրութեան չարժանացան. մի երկու նորը շինել տուեց, որոնք հիներից ոչինչով չեն զանազանուիլ։

4. Նա, ինչպէս յայտնի է, դաստիարակութեան մէջ ծեծը կամ լաւ ևս զանակոծութիւնը, ընդունում է իբրև անհրաժեշտ միջոց, ուստի այստեղ ևս հանդէս հանեց նորան, բայց աւելի ընդարձակ չափով: Նա վաղօրօք հոգաց և երկայն ու հաստ աչաղին քանոններ շինել տուեց ծեծելու համար. այս գործիքը նա գործադրում է բոլորովին ստորոգինակ և անողորմ կերպով—ուր, երբ, որպէս և ո՛րքան հանէ. անգութ հարուածները 2-ից սկսած հասնում էին երբեմն մինչև 40-ը. այս դահիճ—գործիքներից քանի՛ քանիսը մինչև այժմ ջարդուել փշրուել են աշակերտների վերայ։

5. „Կարգապահութիւն" անելով ահա նա ինչէ հասկանում. դիցուք թէ աշակերտը ա) դասի ժամանակ փոքր ինչ շարժուեցաւ, որ տեղը հանգստացնէ կամ մարմնու դիրքը փոխէ. բ) ցեխի, ջրի, ոտնամաններ չունենալու կամ այլ անյայտ անհրաժեշտ գործի պատճառով ուշ եկաւ. գ. երբ ինքը տեսուչը մտա դասարան՝ մեխուածի պէս անձայն նստած չէր, այլ ուսուցչի թոյլտուութեամբ՝ կանգնել էր՝ որ դուրս գնայ հարկաւորութեան համար կամ գնայ գրատախտակի մօտ գրելու. դ. բոլորովին իրանից անկախ պատճառներով չերկարացաւ եկեղեցի գնալ. ե) երբ ինքը կամեցաւ զանահարել՝ նոյն րոպէին նա ձեռքը անձայն չմեկնեց. զ) մի քանի անգամ հարուած ստանալուց յետոյ ձեռքը յետ փախցրեց. է) ցանկացաւ որ և լսէ մեղադրանքի համար իւր բացատրութիւնները տալ և արդարանալ. ը) դպրոցական կամ եկեղեցական՝ լոկ իւր հաճոյքի համար 3—4 ժամ երկարացրած հանդէսներում մինչև վերջը արձանի պէս չկանգնեց, շարժուեց կամ նայեց դէս ու դէն. թ. կամայական կերպով իր նշանակած ուսումնավարձը ամբողջովին չբերաւ, որի պատճառը ծնողքն էին

կամ չքաւորութիւնը։ ժ) Նշանակած ըստ կարգի աշխատաւ կամ խակի չեկաւ ծնողից արդելելով, որ գնան միասին ծովը լողանալու, և այլն. մինչև անգամ այսպիսի ներկի պատճառներով ողորմելիքը չարչարվում են փայտի տակ։

6) Շատ անգամ պատահել է, որ եկեղեցում համ դահլիճումը ժամերով անշարժ կանգնելով և ծեծի գոբութիւնը տեսած լինելով՝ մարդ ազաներից և աղջիկներից չեն համարձակուել դուրս գնալ բնական պէտքի համար այլ նոյն իսկ կանգնած տեղը հանդիսաւոր բոպէում, ահագին բազմութեան առաջ են կատարել։ . . . Թող մտածողները և գրագէտները երևակայեն, թէ ո՞րպիսի ֆիզիկական և բարոյական տանջա՞նք է այս երեխայի, մանաւանդ՝ քիչքոյշ սեռի համար։

7) Շատ է պատահել, որ նա քանանով գլուխներ է պատռել և արիւնաթաթախ արել. իսկ մի անգամ մի ողորմելուն այ՞քան ծեծել էր, որ նա գնաց և երկար ժամանակ մերձի մահ հիւանդացաւ. ինչպէս ասում էին հարուածների տակ սատկիկ կծկուելով և տանջուելով՝ աղիքների բորբոքումն էր սատցել։ Էն հալին որ ազատեցին մահից։

8) Մի անգամ մի աղքատ երեխայի, որը մի բարերարի հաշուով (տարեկան 100 ռ. իւր մանաւոր պրոցումը ուսանում), նա ուղարկում է լուացարարի մատ ձեռնոցները լուելու, որը դուռը փակ գտնելով դատարկ է յետ դալիս։ Նա սատկիկ բարկացած յետ է դրկում նորան մի քանի ընկերներով և հրամայում, որ եթէ դուռը դարձեալ փակ գտնեն, կոտրեն և ձերմակեղենը հանեն բերեն։ Երեխան ծեծից վախենալով կատարում է հրամանը և երբ արդէն ձեռնարկում է լուացարարի տան փակաքը կոտրելու՝ մի և նոյն բակում բնակվողները արգելում են նորան յանցանքը գործելու, որև կրկին դատարկ է յետ դալիս։ Սորա համար նա երեխային լաւ ծեծելից, հայհոյելից և անիծելից յետոյ խսկոյն արտաքսում, բարերարի սուտ հաղորդագրութիւնը ևս հանելով և վերատ[illegible]

9) Դիցուք թէ նա մեկ աշակերտի հրամայում է Գիսին հարուածներ տալ, եթէ դահճի պաշտօն կատարողը կարեկցելով փոքր ինչ հանգարտ զարկէ՝ այն ժամանակ նա սատկիկ բարկացած՝ վեր է առնում քանոնը ձեռքից. մի քանի անգամ փորձական հարուածներ է տալիս դահլիճ—ընկերին և ապա հրամայում իր պէս քանոնահարել։ Այս եղանակը խիստ արդիւնաւոր հետևանք է ունենում աշակերտների համար՝ նոցա մէջ սերտ մտերմութիւն և եղբայրսիրութիւն ապա որելով (՞...)։

10) Ես, միս ձևերովս չբաւականանալով, այժմ էլ լսում ենք, ամարանոցում մի այլ եղանակ է գործադրում — պատկեցրած ծեծել աշակերտին։ Երբ չերանից դուրս է գալիս սարսափելի «ложись» հրամանը՝ նոյն բոպէին հետևում է նորա կատարումը և հարուածների կարկուտը թափվում է անխնայ։

11) Ծեծը այնպիսի սարսափ էր ձգել աշակերտների վերայ, որ նոցանից շատերը քնած ժամանակ ահաբեկուած վեր էին թռչում և աղերսում. «Հայրիկ, հերիք է, էլ չեմ անիլ։ Ես չեմ արել. հայրիկ, ոտերիդ մեռնեմ», և այլն։

12.) Ծեծի մասին մեծամեծ զրոյցներ ծագեցան մի ժամանակ ժողովուրդի մէջ. շատ ծնողներ իրանց արդարացի բողոքը ամենայն տեղ յայտնում էին. և երբ բարեացակամ անձինք խորհուրդ էին տալիս նորան և զգուշացնում այդ մասին՝ նա յայտնապէս ասում էր. «**Իմ մեթոդ այսպէ՞ս է, ես ծեծե՞մ, կըսպանե՞մ. ուրեմն ես չըդիտե՞մ, բաս ե՞ս հին եմ, փոսած ես. ա ա Մարիամեան ուսումնարա՞ն ես այս մեթոդով եմ սերերակներից վերանորոգել. այս մեթոդ եթէ վատ լիներ՝ Մեղուն ևս չէր գովել**»։

13.) Շամախու վիճակի մի գիւղի աղքատ քահանայի երկու որդիքը այս տեղ կարդում էին, մի ինչին պատճառով նա նորանց արտաքսել էր. իսկ քահանայի պառաւ մայրը, որը Թո-

ղել էր գիւղը և եկել թոռներին պահելու, երեխաներին տանելով դպրոց խնդրում է նորան խնայել և կրկին ընդունել։ Բայց նա բարկանում է և պառաւի առաջին երեխաներին ծեծում. խեղճը այլևս չը կարողանալով համբերել՝ ասում է «Վո՜յ, ա՛ՀՔԵՐԴ ՎԵՐԴԷՌՆԱՅ, ՔՈՒ ԿԱ՞ՐԳԸ ՔԵԶ ԿՏՐԷ. ԱՍԻՆՔ ԿԸԴԸՑՆՈՒՄ ՀԸՍ ԿԸԴԸՑՆՈՒՄ, ԷԼ ԽԷ՞ ԿՏՈՐՈՒՄԸՍ ԽՕԽԷՔՍ. ԴԷ ՈՐ ԻՍԿԱ՝ ԵՍ ԷԼ ԿԸ ՏԱՆԻՄ ԼԵՄՆԻՆ ՇԿՈԼԸ» ու դուրս դալիս գայրացած գնում։

14.) Աշակերտների հետ նորա վարմունքը կոշտ է, բռնատրական, բարձրագոչ, բարկացայտ, անքաղաքավար և անտանելի. նա նորանց այսպիսի խօսքեր է ասում. «ԹՇՈՒԱՌԱԿԱՆ, ՆԳՈՎԵԱԼ, ԲԱՇԻ-ԲՈՒԳՈՒԿՆԵՐ, ԽՈԶԵՐ, ՇՈՒՆ-ՇԱՆՈՂԳԻՔ, ԱՆՏԱՌԻ ԳԱՂԱՆՆԵՐ, ՎԱՅՐԻ ԱՆԱՌՈՒՆՆԵՐ, ԷՇԻ ԿՏՈՐՆԵՐ, ՀՈԳԻ՞Ն ՍՈՒՐԸ ՁԵՂ ՓՉԱՑՆԷ, ԱՅՆ ՍՈՒՐԸ ՏԱՃԱ՞Ր ՁԵԶ ՊԱՏԺԷ, ПОДЛЕЦЫ, ИШАКИ, ПРОКЛЯТЫЕ և այլն. նա աղաղակներով յարձակվում է օրիորդների վրայ և բառնդքով սպառնալով՝ ասում. «ՁԵԶ ԵՍ ՆՅՈՒՆՊԷՍ ԿԸ ՊԱՏԺԵՄ (տղաներին պէս)։ Իսկ օտարազգի վարժարանի և ուսուցչաց (Հայերը չեմ ասում) տեսնում ենք այս ամենը։

15.) Ուսուցչների և վերակացուների հետ ևս նորա վարմունքը անտանելի և միանգամայն աններելի է— միշտ բարկացայտ, կոշտ, բռնացող և հարստահարող. նա աշակերտների և այլոց ներկայութեամբ, բոլորովին զուրս տեղից յարձակ վրաորում է նորանց և անպատվում, անխնայ դրժանելով այսպիսի խօսքեր. «ՅԻՄԱՐ, ՏՂԷՍ, ԷՇ, ԲՆՈՒԹԻՒՆԸ ՍԽԱԼՈՒԵԼ Է ՔԵԶ ՄՈՐԴ ՇԻՆԵԼՈՎ, ԴՈՒԼԱՒ ԿՈՎ ԿԸ ԼԻՆԷԻՐ. Ա՛ՍՈՒԱԾ ՔԵԶ ՊԱՏԺԵԼ Է ՔՈ ՄԵՐԸՐԻ ՀԱՄԱՐ, ԱՆԴԱՄԱԼՈՅԾ

(ընտանեն որուստ ունեցողին է այսպէս ասում. . . .)» իսկ անէծքը և հայհոյանքը ևս սոցա համար պակաս չէ, որոնք զանց եմ անում այստեղ գրել. դեռ չեմ յիշում նորա ասելը, գլխելը, նստելը, ձայնի և մարմնաշարժութեան եղանակը, որով գեղեցիկ բառերը և դարձուածները անգամ անդադար վիրաւորում և անպատվում են ողորմելիներին։

16.) Նորա համար տեղը, ժամանակը և անձնաւորութիւնը ոչինչ նշանակութիւն չունին. դասի ժամանակ աղմկալից ձայնով գայրացած մնում է դասարան, դասի շարունակութիւնը ընդհատում, այլ պատճառներով աշակերտներ ծեծում, կրկնացնում, լացացնում, ուսուցչին անարգ բառերով անպատվում, դուրս գալիս գնում..... այսպիսով երբեմն դասաժամի մեծ մասը բոլորովին զուր է կորչում։

17) Այս կարճ միջոցում նա վարձել է աւելի քան 10 ուսուցիչներ և վերակացուներ, որոնք գնալով և առժամանակ մի կենալով մաք՝ ձանձրացել են և շուտով հեռացել, իրանց հետ տանելով շատ դայթակղական տպաւորութիւններ և երբեմն իրանց հասնելիք ռոճկից ևս զրկուելով։

18) Ծառաների հետ թէ ինչպէս է վարվում նա՝ անհնարին է նկարագրել, որովհետև այն ժամանակ հարկ կլիներ դարձեալ յիշոցներ, փողոցային բառեր, անէծքներ, անզուսպ դանահարութիւններ և անսիրտ զրկոյթներ հանդէս հանել, որոնցով զրոյցի և ընթերցողի ամենաշնչաւ զգայմունքները կարող էին վիրաւորուել և պղծուել. բաւական է միայն ասել որ մինչև այժմ բազմաթիւ անձինք վարձուել են նորանից, վայելել և շուտով հեռացել, զարմանալով միանգամայն, որ այնպիսի եկեղեցական ևս կայ և կարող է լինել։

19. Լսեցուք թէ Ղարաբաղցի մէկը իւր մտաց ծառայումն բայց քէֆովն չէ. կամ մի Շամախեցի իւր դէմ խօսել է դուրը, կամ մի ազուցի իւր պատուերը չէ կատարել,—այսպիսի ինչին պատճառներով նա գայրացած կլսէր ամբողջ դասը և քաղաքը վատաբանել, հայհոյել և նզովել. «Ղարաբաղցիք

էշեն, նոքա մարդիկ չեն.... քանզի՝ Շամախին, Աստուած իրանց մեջքի համար շարժեց և աւերեց, բայց դարձեալ չեն խրատվում.... կործանուի՝ Ղազան» .... և կամ երբեմն կրսկէ ամբողջ հայութիւնը անարդել «ՀՇԱՊԻ, ՍՊԷՏ և ՎԱՅԵՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ» անուանելով, որին ծառայելը իբր թէ անարժան բանէ. և սա այն «հայասէր» հայրասուրբնէ, որը մի երեսելի կրօնական-մանկավարժական օրագրում անպատար աղաղակում է. «ՄԻՄ ՍՕՆԵԼԻՔ ՀԱՅԵՐ, ԱՂԴ ԻՄ ՊԱՇՏԵԼԻՔ»:

20.) Դիցուք թէ նա քաղաքի դուրսը զբօսանքի էր գնում փողոցի միւս կողմին հեռու կանգնած պատանիներ իր էջով չերկրպագեցին իրան, և կամ թէ ծնողներ իրանց ուսակների ծեծվելու կամ արտաքսուելու պատճառը իմանալու համար նորան դիմելով և կոշտ ընդունելութեան հանդիպելով՝ սկսեցին նորա հայհոյանքների և անէծքների փոխարէնը կրկնակի յետ դարձնել իրան, նա այսպիսի դէպքերում անվայել ձայներով և բառերով «պուլեթեայի» և «քանդրուտ» անուանով կոչառնայ նորանց, թէ և ինքը նուիրուած է Աւետարանին, որը երբէք մարմնաւոր զէնքի չէ դիմում:

21.) Մի բարեպաշտ հայ արուեստաւոր որոշած և պատրաստուած է լինում հոգեգալստեան տօնին ս. Հաղորդութեան արժանանալու, իսկ այդ օրը, պատահմամբ, պատարագիչը լինում է հ. Սանփանէն: Երբ պատարագի վերջը նա մօտ է գընում հաղորդվելու՝ հայրասուրբը չէ հաղորդում, շուռ է գալիս ու պրծայնում. խեղճ մարդը ապշած է մնում և թէ և քահանայքը հրաւիրում են առանձին հաղորդուելու՝ բայց նա չէ ցանկանում, այլ յուսահատած թողում դուրս գնում, որի համար և մինչև այսօր էս մտատանջվում է դեռ: Այս վարմունքն էլ երևի մի խորհուրդ կունենայ. և դեռ

զարմանում են մեր եկեղեցականները, երբ ոմանք հաւատափոխութեան են դիմում:

22) Նա հրաւիրուեցաւ այստեղ երբեմն մանաւոր դպրոցի պահող և ծխականներին տեսուչ. յայտնի նպատակ և ծանրագոյն պաշտօն: Բայց նա իրան չըվիրաւորեցաւ շատ գործերի մէջ խառնուելով՝ իր գործը բաղդրեալ շինեց և խիստական նպատակից շեղուեցաւ. ա) Դպրոցների տնտեսական մասը իւր ձեռքը առաւ, նշանակեց անխոտիր (սակաւ բացառութեամբ), որ իւրաքանչիւր աշակերտ ամսական մի ռուբլի վճարէ, և ով ամսադլխին չըբերէր՝ ծեծվում էր և արտաքսվում. և սորանից ստիպուած ոմանք բողոքականների դպրոցը գնացին: Ընկերութեան անդամները և հոգաբարձութիւնը, որոնց աւելի յայտնի է ծնողաց դրութիւնը՝ քան վարդապետին, նկատելով ժողովուրդի դժգոհութիւնը և նորանից ծագելիք վնասները, քանիցս խնդրել են նորան տնտեսական հոգսերով չըծանրանալ, այլ հարկաւոր դրամը իրանցից պատրաստի տանալ և գործ դնել, բայց նա յամառեցաւ և իւր ասածը արաւ: բ) Ուսուցչներ և վերակացուներ վարձելու և արձակելու վերաբերութեամբ նա վարուել է մինչև այժմ կամայական և միայն իրան յայտնի կերպով, թէ և նա պարտաւորէր խորհուրդ անել այդ մասին Ընկերութեան անդամների և հոգաբարձութեան հետ, որոնք միայն են իրաւունք ունեցող տնտեսական մասին վերայ և ոչ երբէք տեսուչը:

23) Հանդիսամոլութիւն, ձեւապաշտութիւն և անձնասիրութիւն նորա գործունէութեան գլխաւոր յատկանիշներ են: Նա մեծ հոգացողութիւն է անում. ա) ժողովուրդին միշտ աչքի ընկնող բաներով գրաւել, բ) թէ՝ եկեղեցումը և թէ՝ դպրոցումը փարթամ հանդէսներ անել, գ) այդ հանդէսներում ասելու և երգելու համար՝ հաղիւ գրագէտ փոքրիկ մանուկներին շարախներով առաջ, ուսման համար նշանակած

ժամերը պահելով, երգեր, ոտանաւորներ, ճառեր և այլ բաներ թուաթակօրէն սովորացնել և անգիր անել տալ, դ) պահանջել և սովորել աշակերտուհիներին, որ միասնական հագնուին իւր հնարած նորելուր ժապաւէններով և գոյներով, թէ և այդ ծանրութիւն լինի ծնողների վերայ և նոցա տհաճութիւնը շարժէ, ե) ամենաթեթև զանցառութեան համար անգամ աշակերտներին ծեծել և ուսուցիչներին անպատուել, զ) իւր յանձնառած դասերը չբպարապել, միշտ զանցառու դանուել և անպատասխանատու մնալ. և այլն:

24) Այս տարուայ սկզբում ժողովուրդի ունևոր անդամները 10, 15, 20, 25 մանէթներով ստորագրելով աւելի քան 300 ռուբլի գումար կազմեցին, որպէս զի զանազան օրագիրներ և լրագիրներ ստացուին, որոնցից և ամէնքը կարողանան տանել և օգուտ քաղել: Այժմ, երբ ընթերցանութեամբ շահվելու ամենալաւ ժամանակն է, փող տուողները զրկուած են այդ անհրաժեշտ պիտոյքից, որովհետև լրագիրները ինչպէս ստացվում՝ այնպէս էլ կապած գնում են նորա մօտ — ամարանոց, և մինչև կըրկին յետ կրգան՝ արդէն 10 կամ 15 օր անցած է լինում և համը գնացած. այժմ շատերը տուողներից փոշմանել են:

25) Այսքան ժամանակի ընթացքում դպրոցները փոխանակ յառաջադիմութեան՝ մեծ յետադիմութիւն են գործել ամենայն առարկաներից, որոնք բոլորը, բացի երգեցողութիւնից, առանց ուշադրութեան են թողուած. մանկավարժական խորհուրդներ ամենևին չեն եղել, որոնց տեղը նորա կամայականութիւնն է բռնում. հարցաքննութիւն այս տարի չեղաւ իւր ժամանակին, որին սովորաբար սպասում էր ժողովուրդը, որովհետև աշակերտները պատասխանելու ոչինչ չունին, թէ և ուսուցիչները ճշտութեամբ այցելել են իրանց դասերին և պարապել. դպրոցների վիճակը մի կատարեալ բաբիլոն է: Երևի նա մտածում է, թէ՝ ի՞նչ հարկաւորէ հարցաքննութիւն, քանի որ ժողովուրդը արտաքին փայլով բաւականանում է և

իմ լեզուն ճարպիկ է նորան համոզելու և հանդարտացնելու. բարեխիղճ համարատուութիւնը հեշտ բան չէ:

26) Նա իւր բոլոր ուշադրութիւնը դարձրել է երգեցողութեան և ժամասացութեան վերայ: Նա չէ բաւականանում, որ երգեցողութիւնը մանուկները ուսանին աստիճանաբար, նշանակած ժամերում միայն. այս առարկան մի բանաւոր է դարձել միսների վերայ և նոցա համար նշանակած ժամերը շատ և շատ անգամ խլվում են և սորան նուիրվում: Զանգակը խփում են և ուսուցիչը ներս է մտնում, թուաբանութեան կամ ռուսաց լեզուի դաս է. բայց աշակերտների մեծ մասը չըկայ, նոքա գնացել են երգելու, որովհետև այս ինչ շարականը կամ երգը պատրաստում են: Պարապմունքները առհասարակ չափազանց երկար են. երեխաները մինչև կէս օրվայ 2 կամ 3 ժամը դպրոցում մնում են, այնուհետև հազիւ տուն հասած և աղքատիկ ճաշը կերած՝ ողորմելի երգեցողները կրկին յետ են գնում դպրոց և սկսում դարձեալ „Լուրը սանդի մէջ ածել ու ծեծել“ — երգել ու երգել մինչև երեկոյ, իսկ շատ անգամ գիշերը ևս մի քանի ժամ լապտերների լուսով: Բայց ե՞րբ պէտք է նոքա հանգստանան, ցաղդուրուին, նոր տպաւորութիւններ ստանան, միւս օրվայ դասերի վերայ մտածեն և պատրաստեն,—այդ Աստուած գիտէ: Այդ մանուկների կերպարանքի վերայ դրոշմած է ծայրայեղ աշխատելու սպանիչ ազդեցութիւնը. եթէ լաւ քննող լինի՝ դուցէ շատերի կուրծքը ճնշուած յայտնուի շարունակ և անխորհուրդ երգելից, իսկ աղէթափութիւն ստացող եղել է դրանից: Այդ առարկայի ուսուցիչը համարեա թէ նահատակվում է. խեղճը շնչասպառ է եղել չափազանց երգելից. նա ինքը կըվկայէ, որ աշակերտները ձայնագրութիւնը ո՛չ թէ հիմնաւոր և հետևողական են ուսանում, այլ այս ինչ երգը կամ այն ինչ շարականն են պատրաստում բոլորովին մեքենաբար: Թէ այսպէս վարուելով նա ի՞նչ նպատակի է կամենում հասնել՝ յայտնի չէ:

27) Մեծ պասի վերջին շաբաթը և Զատկին նորա տու-
ած քարոզներից, պատրաստած մեծածախք սեղանից և ձո-
ւոմարան ձուերից յափշտակուած՝ ամանք ժողովուրդի մէջ
փող ժողովեցին, որ նորան պատուելու համար քաղաքական
կլուբում մի հանդիսաւոր խնջոյք տան. բայց երբ յափշ-
տակութեան բոպէները անցան և տարաձայնութիւնք լոյս
ընկան՝ շատերը իրանց տուածը յետ վերառան, և այժմ
մնացել է, կարծեօք, 200 ռուբլի, որը թէ ի՞նչ կանեն՝ յայտ-
նի չէ: Բացի դորանից՝ իւր մասնաւոր դպրոցի աշակերտներից
շատերը, որոնց համար և նա եկել է, արդէն դուրս են գը-
նացել բոլորովին, և հաւանական է՝ որ Սեպտեմբերի սկզբից
քիչերը միայն կամ գուցէ չմնան էլ. պատճառները ծնողնե-
րին են յայտնի:

28) Այն ինչ դեռ շատ կարևոր պակասութիւններ կային
հոգալու՝ նա մտցրեց դասերի շարքը երկու սեռի դպրոցնե-
րում մարմնամարզութիւնը ևս, որը և մի ժամանակ մեծ
տարաձայնութեան առարկայ դարձաւ և աղմկեց քաղաքը:
Ծնողները, որոնց համար խորթ էր երևում տեսնել՝ թէ ինչ-
պէս զինուորականը իրանց աղջիկներին դէս ու դէն շօշափե-
լով մարմնամարզական շարժումներ է անել տալիս, դեռ ևս
աւելորդ համարելով նորան՝ խնդրեցին, ընկերութեան անդամ-
ների միջնորդութեամբ, առժամանակ դադարեցնել այդ զբաղ-
մունքը. բայց նա մարդկանց առաջին լաց եղաւ, յամառուեց
և ասաց. «կամ մարմնամարզութիւն և կամ մահ, ով չէ
կամենում՝ թող դուրս գնայ»: Այնուհետև մինչև այժմ օ-
րիորդների մի մասը (որը երկիւղի և ստիպանքի ազդեցութեամբ
ակամայ հնազանդուեցաւ) երբ մարմնամարզութեամբ է զբաղ-
ւում՝ միւս մասը մնում է անգործ և ժամանակը կորցնում զուր:

29) Իբր թէ երեք դպրոցի հոգալիքը և ծանրութիւնը բաւական
չէին՝ նա Շամախու վիճակի թեմական վերատեսչութիւնը ևս
յանձն առած ունի, որը աւելորդ պաշտօններ և իրաւունքներ

ձեռք բերելու մի զարմանալի ագահութեան նշան է: Ուսու-
կանները սպասում էին ամառային ամիսներին, որ արձակուրդի
ժամանակ վերատեսչը պարապ գոլով՝ այցելութիւն անէ
իրանց խեղճ դպրոցներին և անդպրոց գիւղերին, որոնք այն-
քան կարիք ունին հոգալու, և մինչև անգամ Շամախուց քա-
նիցս անգամ խնդրել են իրանք, որ գնայ և հարցաքննու-
թեանը ներկայ լինի. բայց նա իւր անձի հանգստութիւնը ա-
ւելի լաւ համարելով՝ մի քանի ընտիր աշակերտներով հեռա-
ցաւ ամարանոց, ուր թէ ի՞նչ գործունէութիւն է ունեցել՝
յետոյ կըգրուի: Մի և նոյն ժամանակ այստեղի բազմաչարչար
ծխականներին զրկեց արձակուրդի բարիքը վայելելուց, և ահա
ամբողջ ամառ խեղճ մանուկները և ուսուցիչները անտանելի
տօթից և փոշուց տանջուելով, արիւն-քրտինք մտած, մեքե-
նաներ դարձած, պարապում են, մանաւանդ՝ երգեցողութիւն,
փոխասացութիւն և մարմնամարզութիւն: Այս հանգամանքը
օտարների անգամ զարմանքը և ծիծաղը շարժում է: Այստեղ
ամառուայ օրերը անտանելի են, որովհետև կամ հիւսիսն է
փչում շարունակ, որը փոշու մրրիկով ծածկում է քաղաքը,
և կամ հարաւը, որը խոնաւութեամբ և գարշահոտութեամբ
ապականում է օդը. իսկ երբ բոլորովին քամի չէ լինում՝ շըն-
չառութիւնը հազիւ թէ անհնարին չէ դառնում:

30) Այսպիսի ժամանակում, երբ նա պարտաւոր էր քա-
ղաքում մնալ և յորդորել ժողովուրդին Թիւրքաբնակ մեր
եղբայրների մասին հոգալու և առհասարակ պատերազմական
գործերին օգնելու ըստ կարողութեան, նա ամարանոց է ա-
ռանձնանում և իւր անձը պաշտում. մինչև անգամ Վերա-
փոխման պէս մեծ տօնի օրը նա քաղաք չեկաւ, այլ երգե-
ցիկ խումբը տանել տուաւ իւր մօտ, որ այնտեղի մատուռին
մէջ ժամ ասելով հիացնէ մի քանի հոգիներին:

31) Բարերար անձինք մի քանի հարիւր ռուբլի փող են ըն-
ծայել աղքատ աշակերտների հագուստի համար, այդ փողերը

նորա ձեռքովն են անցել: Այս հաշիւները շատերին կասկածների տեղիք են տալիս, թէ ինչո՞ւ տնտեսական մասը Հոգաբարձութեան անմիջական տեսչութեան ներքոյ չէ ընթանում, ինչպէս հարկ է:

32) Նորա քերթողում «Ես» դերանունը զարմանալի կերպով միշտ կրկնվում է բոլոր հոլովներով. աշակերտներին ասում է. „Վերև Աստուած, ներքև ես ձեզ համար. իմ իւրաքանչիւր խօսք դուք պիտի կատարէք և անդիմադարձ հնազանդութիւն ցոյց տաք, թէ և ձեր ծնողներ չկամենան. այսպէ՛ս խօսեցէք, այնպէ՛ս մտն եկէք, որ մարդիկ գիտենան, որ իմ աշակերտներ էք, և այլն“: Նա դասի ժամանակ մի որ և իցէ առած կամ այլ բան բացատրելիս՝ սկսում է անարգ և հայհոյական բառեր գործածել դէպի իւր հակառակորդները և նրան անյաղթելի նկարագրել: Աշակերտներին սպառնում և արգելում է, որ դպրոցում պատահած որ և իցէ անկանոն գործ կամ խօսք չասեն դուրսը ում և իցէ, մի և նոյն ժամանակ ստիպանօք հաւատացնում է, որ նոքա պարտաւորեն դուրսը բոլոր տեսած ու լսածները մի առ մի հաղորդել իրան: Գիտենալով որ ոմանք կամք ունեն իրանց որդեքը մօտեցը հանելու՝ նա երեխաներին մրգեղէններով և խօսքերով թելադրում է ընդդիմանալ ծնողներին, լաց լինել և ասել թէ՝ „մենք ուրիշ մօտ չենք կարդալ, ոչ ոք հայրիկին պէս մեզ չի սիրել“: Դժգոհ աշակերտներին գոհութեան նամակներ է գրել տալիս ամբաստանանցից իրանց ծնողների վերայ:

33) Բազում հասարակութեան մէջ երկպառակութիւն և բաժանում եղած չէ, ամենայն հասարակական գործ միաբանութեամբ է գործուած միշտ, իսկ նորա պատճառով արդէն երկ-

պառակութիւնը մտել է ժողովուրդի մէջ. սա ապացոյց է, թէ նորա գործունէութիւնը ինչ ոգի ունի: Այս բոլորից Մարդասիրական ընկերութեան խորհրդոյ անդամները և ծխական դպրոցի Հոգաբարձութիւնը սառած են իրանց պաշտօնից և ոմանք հեռացել են: Նա հաշտարար, կապող և միաւորող ընթացք չէ բռնում. չէ աշխատում թարմ ուժերով, զարգացած անձինքներով շրջապատուել, նոցա ուղղութիւն տալ, առաջնորդել և նոցա գործակցութեամբ բան առաջացնել, այլ ընդհակառակն՝ իւր տարամերժող ոճով և վարմունքով ամենքին զզուեցնում է և փախցնում, մինչև անգամ իւր և ուսուցիչների մէջ բոլորովին անհետացած է գործակցական մտերմութիւնը և անկեղծ յարգանքը: Այս բոլորին մանուկները ականատես գոլով՝ խիստ հիմնաւոր ապաւորութիւններ են ստանում ամէն օր, դեռ չեմ յիշում ժողովուրդը:

34) Նորա գործունէութեան մէջ զարմանալի հակասութիւններ կան. մի կողմից սաստիկ ծեծ, անարգանք, հայհոյանք և սարսափ, իսկ միւս կողմից յաճախակի մրգեր բաժանել, քաղցրեղէններ ուտեցնել և միասին լողանալու գնալ: Աշակերտները մի կողմից՝ երբ երեսին նայում են՝ դողում են երկիւղից, իսկ միւս կողմից ետևից լեզու են հանում և ձեռքով քրթմնում, երբ շուռ է գալիս: Մանուկներից ոմանք սարկարար և ահուդողով են վարվում հետը, իսկ ոմանք չափազանց համարձակ, յանդուգն և լպստած: Ծեծելիս ոմանց սաստիկ պինդ է զարկում և կսկծեցնում, իսկ ոմանց բոլորովին անզգալի կերպով, որովհետև քանոնը բարձրացնելով արագ ցած է բերում և հանդարտութեամբ ձեռքին կպցնում, որը աշակերտների մէջ տրտունջ է զարթեցնում՝ իբրև երեսպաշտական վարմունք:

35) Եւ վերջապէս՝ առհասարակ նորա վարքը և կեանքը մի տարօրինակ բան է. խաղաղութեամբ վարուել, քաղաքավարութեամբ խօսել և համեստութեամբ գործ կատարել հե-

ում են նորանից. ծեծը, հայհոյանքը, փառասիրութիւնը, բարկութիւնը և յաճախ կրկնուող սկանդալները նորա գործունէութեան աղն են, նորա դաստիարակական ասպարէզն ամենօրեայ երևոյթներն են:

Ահա այս է հ. Ստեփանէի ուրթամտեայ գործունէութիւնը, որա ձեռքին է գտնվում Շամախու թեմի և մասնաւորապէս Բաքուի ազգային կրթութեան վիճակը: Այս համառօտ նկարագիրը, որը ես գրեցի իբրև չէզոք անձն, հիմնուելով կատարեալ փաստերի վերայ, այժմ յանձնում եմ ընթերցողների ուշադրութեանին, առանց իմ կողմից խորհրդածութիւններ աւելացնելու. այս բոլորը կարող են աւելի բացատրել և հաստատել բազմաթիւ անձինք, եթէ պէտք լինի երբ և իցէ:

Այս ութ ամսի միջոցում եղել են անձինք, որոնք՝ հասարակաց օգտի համար՝ խնդրել և համեստ խորհուրդ են տուել հ. Ստեփանէին փոքր ինչ մեղմացնել, փոխել և կանոնաւորել իւր վարմունքը, բայց նա միշտ մնաց անհամոզելի: Եւ այսպէս՝ այն վարդապետը, որը ամենայն ժամանակ և տեղ հաւատացնում է և յայտարարում՝ թէ ինքը բոլորապատուղ ողջակիզուած է Ազգի յառաջադիմութեան և Աւետարանական սիրոյն համար, որի բերանում անդադար կրկնվում են „քաղցրագոյն Յիսուս և Փրկիչ“ բառերը, որը քարոզի ժամանակ բայց է լինում և ադիոդրմ հեծեծանօք աղօթում, որը իւր մասնաւոր դպրոցը անդամ Փրկչեան է անուանել, որը պարծենում է իւր գիտութեամբ և դատարակութեան արուեստին հմտութեամբը, որը ամենամտահ կերպով հաւատացնում է մեզ՝ թէ իւր աղօթքը Աստուած միշտ լսում է և կատարում, որը պնդում է թէ ինքը հրաշքներ ևս գործել է հիւանդներ բժշկելով, և որը, վերջապէս, սատանիկ պահանջելով՝ ամենքից «Հայրիկ» տիտղոս է սեպհականացրել իրան,—այն վարդապետը, ասում եմ ցաւելով, չկարողացաւ իւր կիրքերի ղոնէ մի մասը զոհել հասարակաց դպրոցի օգտին:

Թէ անաչառ ընթերցողները ի՞նչպէս կը դատեն այս մասին՝ չը դիտեմ, միայն ես անկեղծ խորհուրդ կը տամ հ. Ստեփանէին ջանքով են հէ՞ռանալ մանկավարժական ասպարէզից, որը սա՛ն քան փշալից է իւր համար, և ընտրել մշտաշրջիկ քարոզչի պաշտօն, որով գուցէ բաւական օգուտ բերէ: Իսկ Մարդասիրական Ընկերութեան և Բաքուի եկեղեցիների ջաղջկաբեղ ուշքը դարձնելով վերոյգրեալների վերայ՝ բոլոր սրտով ցանկանում եմ, որ նոցա հովանաւորութեան ներքոյ կատարվող անմարդասէր գործերը շուտով կարձուին ու չարատաւորեն իրանց անունը:*)

Հայ:

20 Օգոստոսի 1877 թ.

Բաքու:

---

*) Այս յօդուածը պատրաստ էր Օգոստոս ամսումը եւ պիտի տպագրուէր այն ժամանակ. բայց մեզանից անկախ պատճառներով ուշացաւ մինչեւ այժմ: Սեպտեմբերի սկիզբում հ. Ստեփանէն վերադարձաւ ամարանոցից, որից յետոյ դպրոցական շրջանում մի քանի սրտամաշ իրողութիւններ տեղի ունեցան: Այժմ դպրոցները անխնամ եւ դառն վիճակի մէջ են, հասարակութիւնն էլ վրդովուած է նորա բռնած ընթացքից: Հոգով ցանկանումենք, որ հ. Ստեփանէի հարցը շուտով խելացի կերպով լուծուէր այստեղ եւ ժողովուրդը նորա պատճառով չյուսահատուէր ու չերկպառակուէր: Սեպտեմբերի 28:

Հայ:

Дозволено цензурою. Тифлисъ 14 Октября 1877 г.

Բաքու: Հայոց Մարդասիրական Ընկերութեան Տպարան:

ՀՀ Ազգային գրադարան
NL0345268